Հայկական Ժամանակ
#72 (2021), շաբաթ, մայիս 3, 2008թ.

ՉԻ ԼՍԵԼ

ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ

Գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) տարեկան ընդհանուր ժողովի ժամանակ Սերժ Սարգսյանի բավական կոշտ ու ինչոր տեղ հանդիմանական ելույթից հետո երեկ «Տեսակետ» ակումբում հյուրընկալվել էր ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը:

Եւ թեեւ Սերժ Սարգսյանի ասելիքը, ըստ էության, այն էր, որ գիտնականները միայն պահանջում են, իսկ կառավարությունը սոցպաշտպանության նախարարություն չէ, Ռադիկ Մարտիրոսյանը երեկ դարձյալ կարեւորեց ֆինանսական աջակցությունը, առանց որի գիտնականները մեծ հաջողությունների հասնել չեն կարող: «Ես էլ եմ համաձայն, որ կառավարությունը սոցպաշտպանության նախարարություն չէ, բայց մյուս կողմից՝ գիտությունը մարդու այն գործունեությունն է, որը երկրի հովանավորության տակ պետք է լինի, եւ գիտությունն առանց միջոցներ տրամադրելու չի լինի»,- համամիտ լինելով հանդերձ՝ այնքան էլ համամիտ չէ ԳԱԱ նախագահը: Նա դժգոհում էր նաեւ, որ եթե, ասենք, կրթության բնագավառում նախաձեռնած բարեփոխումների համար միջազգային բազմաթիվ դրամաշնորհներ ու վարկային ծրագրեր իրականացվեցին, ապա գիտության բարեփոխումներն անցնում են առանց որեւէ ֆինանսական աջակցության: «Իսկ գուցե արդյունքի հարցո՞ւմ վստահություն չկա»,- հետաքրքրվեցինք: «Չեմ կարծում: Ասեմ ձեզ՝ ես ռեկտոր եմ եղել 13 տարի, գիտեմ՝ ինչ է: Միջազգային կազմակերպությունները՝ Համաշխարհային բանկ, Զարգացման բանկ եւ այլն, շատ էին շահագրգռված մեր կրթության բարեփոխումներով, դրա համար առաջարկում են, որ իրենք այդ բարեփոխումներն անեն: Ես ենթադրում եմ, որ այդ կազմակերպությունները գիտության առումով առանձնապես հետաքրքրված չեն, դրա համար էլ այդպիսի առաջարկ, որ նպաստեն գիտության բարեփոխումներին, չկա: Այդ բանը երեւի անի մեր պետությունը»,- ասաց ԳԱԱ նախագահը: Նրանից փորձեցինք ճշտել նաեւ, թե ի՞նչ է զգացել, երբ Սերժ Սարգսյանն այդ նույն տարեկան ընդհանուր ժողովի ժամանակ «ակադեմիկոս» բառն օգտագործելուց առաջ ներողություն էր խնդրում (նա ներողություն խնդրեց նաեւ «հավաքարար» բառից առաջ): Չէ՞ որ ներողություն խնդրում են, ասենք, հայհոյական ու տգեղ խոսքեր արտասանելու դեպքում: «Ինչո՞ւ, ակադեմիկոսը, ինչ է, վա՞տ բառ է»,- նախ զարմացավ Ռադիկ Մարտիրոսյանը, հետո էլ ենթադրեց, որ երեւի սխալ ենք հասկացել, որ Սերժ Սարգսյանը, հնարավոր է, ակադեմիկոսներից ներողություն է խնդրել ինչոր բան ասելուց առաջ. «Ներողություն, պարոն ակադեմիկոսներ, որ չգիտեմ՝ ինչ»: Ինչեւէ: Լրագրողները հետաքրքրվեցին նաեւ, թե արդյո՞ք Գիտությունների ազգային ակադեմիան որեւէ կերպ իր բողոքն է արտահայտել այն բանի կապակցությամբ, որ մարտի 1-ին ծեծի են ենթարկվել հանգուցյալ ակադեմիկոս Ռաֆայել Ղազարյանի կինն ու դուստրը: Այս հարցն ակնհայտորեն անսպասելի էր Մարտիրոսյանի համար, քանի որ նա մի քանի վայրկյան չէր կողմնորոշվում՝ ինչ պատասխանել: «Գիտե՞ք ինչ, ես, նու, չգիտեմ, նու, եթե ասեմ՝ առաջին անգամ... լսել էի ինչ-որ տենց բան, բայց մենք որտեղի՞ց իմանանք, նախ, էդպե՞ս է»,- իր լսածի ճշմարտության հարցում կասկածներ հայտնեց ԳԱԱ նախագահը, իսկ երբ լրագրողները նկատեցին, որ մամուլում այդ մասին հրապարակումներ են եղել, Ռադիկ Մարտիրոսյանն արձագանքեց՝ մամուլը շատ բան է գրում: Ապա այսպես շարունակեց. «Դե, հիմա ակադեմիան ի՞նչ անի, ինչո՞վ հանդես գա: Ի՞նչ է նշանակում կոլեգա, գուցե նա իր կարծիքն ունի, մի ուրիշ ակադեմիկոս ուրիշ կարծիք ունի»: Ակադեմիայի նախագահին հիշեցրին, որ խոսքը բռնության մասին է: «Ակադեմիայի տարբեր ելույթներում մենք, իհարկե, դատապարտում ենք բռնությունը, բայց մենք կոչ ենք անում համաձայնության, կոչ ենք անում կայունության, կոչ ենք անում խաղաղության»,- գերադասում է լղոզված, ընդհանրապես բռնության ու ոչ կոնկրետ դեպքի մասին վերաբերմունք արտահայտել Ռադիկ Մարտիրոսյանը: Իսկ ահա իր



ԿԳԲ-ի գործակալ լինել-չլինելու մասին նա չցանկացավ խոսել: Այսինքն՝ երբ նրան հարց ուղղվեց, թե ինչպե՞ս է մեկնաբանում վերջերս մամուլում եղած այն հրապարակումները, համաձայն որոնց՝ ինքը ԿԳԲ-ի գործակալ էր, ընդ որում՝ նույնիսկ ծածկանունն էր նշվում՝ Տիգրանյան, ԳԱԱ նախագահը պատասխանեց. «Ես չեմ ուզում դա մեկնաբանել, միայն մի բան կասեմ: Դուք այդ պատմությունը պիտի իմանայիք եւ այդ հարցը ինձ չտայիք: Նիկոլ Փաշինյանը Երեւանի պետական համալսարանից հեռացվել է իմ հրամանով, եւ 14 տարի է՝ նա ինչ կերպ ասես մտածում է իմ մասին: Վերջացավ»,- իր ԿԳԲ-ի գործակալ լինելու մասին տեղեկատվությունը չհերքելով՝ հայտարարեց ԵՊՀ նախկին ռեկտոր, ներկայումս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը:

ԱՆՆԱ ՉԱԽԱՐՅԱՆ